ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2015

# ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

## ԹԵՍՏ 3

Խմբի համարը

Նստարանի համարը

*Հարգելի՛ դիմորդ*

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

**Ցանկանում ենք հաջողություն:**

# Ա մակարդակ

1 Ե՞րբ է կնքվել հաշտության պայմանագիր Եգիպտոսի փարավոն Ռամզես II-ի և խեթական արքա Խաթուսուլիս III-ի միջև.

1) Ք.ա. 1239թ.
2) Ք.ա. 1279թ.
3) Ք.ա. 1213թ.
4) Ք.ա. 1259թ.

2 Ե՞րբ է Բաբելոնիայի թագավոր դարձել քաղդեացի ցեղապետ Նաբոպալասարը.

1) Ք.ա. 640թ.
2) Ք.ա. 626թ.
3) Ք.ա. 705թ.
4) Ք.ա. 612թ.

3 Ե՞րբ է տեղի ունեցել Սուասոնի ճակատամարտը.

1) 466թ.
2) 486թ.
3) 496թ.
4) 476թ.

4 Ե՞րբ է Մուհամեդը գրավել Մեքքան.

1) 632թ.
2) 622թ.
3) 630թ.
4) 637թ.

5 Ե՞րբ է ընդունվել ԱՄՆ-ի Սահմանադրությունը.

1) 1791թ.
2) 1776թ.
3) 1802թ.
4) 1787թ.

6 Ե՞րբ է իր աշխատանքները սկսել Փարիզի խորհրդաժողովը.

1) 1918թ. դեկտեմբերի 19-ին
2) 1920թ. հոկտեմբերի 17-ին
3) 1919թ. մայիսի 28-ին
4) 1919թ. հունվարի 18-ին

7 **Ե՞րբ է հիմնվել Փահլավիների արքայատոհմը.**

1) 1904թ.
2) 1925թ.
3) 1920թ.
4) 1918թ.

8 **Ո՞ր արքայի օրոք Աքքադի թագավորությունը հասավ հզորության բարձրակետին.**

1) Համմուրապիի
2) Ուտուխեգալի
3) Նարամսինի
4) Սարգոնի

9 **Ինչպե՞ս էր կոչվում Հին Աթենքի ավագների խորհուրդը.**

1) արեոպագոս
2) բուլե
3) էկլեսիա
4) ապելլա

10 **Որտե՞ղ է 778թ. ջախջախվել ֆրանկների վերջապահ գունդը Ռոլանդի գլխավորությամբ.**

1) Հռոմի մատույցներում
2) Ռոնսևալի կիրճում
3) Կատալաունյան դաշտում
4) Պուատիեի մոտ

11 **Ո՞վ է «Անառակ որդու վերադարձը» կտավի հեղինակը.**

1) Ռուբենսը
2) Ալբրեխտ Դյուրերը
3) Ռեմբրանդտը
4) Ռաֆայել Սանտին

12 **Ո՞վ էր Երկրորդ կայսրության հիմնադիրը Ֆրանսիայում.**

1) Նապոլեոն II-ը
2) Նապոլեոն III-ը
3) Կարլոս I-ը
4) Ռոբեսպիերը

13 **Ո՞վ էր բաբիականության ուսմունքի հիմնադիրը.**

1) Աբաս-Միրզան
2) Աղա Մոհամմադը
3) Ալի Մուհամմեդը
4) Մուհամեդ Ալին

**14** **Ինչպե՞ս էր կոչվում Ֆ. Ֆուկույամայի աշխատությունը.**

1) «Նոր մեկնարկ»
2) «Քաղաքակրթությունների բախումը»
3) «Պատմության ավարտը»
4) «Քաղաքակրթությունների երկխոսությունը»

**15** **Ի՞նչ է դեմոսը.**

1) Պետականության ձև հինհունական պոլիսում:
2) Հին հունական հասարակության անազատ բնակչությունը:
3) Պոլիսի կառավարմանը մասնակցող արական ողջ ազատ բնակչությունը:
4) Պոլիսի կառավարման գլուխ կանգնած տոհմային ավագանին:

**16** **Ո՞րն է «բարոկկո» տերմինի բացատրությունը.**

1) տպավորություն
2) բնական, բնություն
3) խորհրդապաշտություն
4) արտասովոր, տարօրինակ

**17** **Եգիպտական փարավոններին դասավորել ըստ գործունեության հաջորդականության.**

ա. Թութմոս III
բ. Ամենհոտեպ IV
գ. Ռամզես II
դ. Յահմոս I

1) բ, գ, դ, ա
2) ա, գ, դ, բ
3) գ, ա, բ, դ
4) դ, ա, բ, գ

**18** **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդա– կանությամբ.**

ա. Պիպին Կարճահասակի թագադրությունը
բ. Ֆրանկական թագավորության առաջացումը
գ. Կոնրադ I Ֆրանկոնացու թագավոր ընտրվելը
դ. Կարլոս Մեծի կողմից Սաքսոնիայի նվաճման սկիզբը

1) բ, դ, ա, գ
2) դ, բ, գ, ա
3) բ, ա, դ, գ
4) գ, ա, դ, բ

**19** **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. «Փառահեղ հեղափոխությունը» Անգլիայում
բ. Անձի անձեռնմխելիության մասին օրենքի ընդունումը
գ. Անկախականների կողմից հանրապետության հռչակումը Անգլիայում
դ. Անգլիական խորհրդարանի կողմից Ջեյմս II թագավորին «սահմանադրության խախտման մեջ մեղադրելը»

1) բ, դ, գ, ա
2) բ, ա, դ, գ
3) գ, բ, դ, ա
4) դ, գ, ա, բ

**20** **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Երկրորդ աշխարհամարտի առաջին փուլը
բ. Լեյբորիստների առաջին կառավարությունը Անգլիայում Ռ. Մակդոնալդի վարչապետությամբ
գ. Համաշխարհային տնտեսական Մեծ ճգնաժամը
դ. «Բարգավաճման ժամանակաշրջանը» ԱՄՆ-ում

1) դ, բ, գ, ա
2) բ, դ, ա, գ
3) գ, ա, դ, բ
4) դ, ա, բ, գ

**21** **Ե՞րբ է ցրվել Աթենական ծովային միությունը.**

1) Ք.ա. 405թ.
2) Ք.ա. 401թ.
3) Ք.ա. 404թ.
4) Ք.ա. 406թ.

**22** **Ե՞րբ է տապալվել արքայական իշխանությունը Հռոմում.**

1) Ք.ա. 535թ.
2) Ք.ա. 510թ.
3) Ք.ա. 515թ.
4) Ք.ա. 525թ.

**23** **Ե՞րբ է ձևավորվել Գերմանական (Տևտոնական) թագավորությունը.**

1) 916թ.
2) 936թ.
3) 919թ.
4) 933թ.

| 24 | **Ե՞րբ է պարտվել սահմանադրական շարժումն Իրանում.** |
|---|---|

1) 1911թ.
2) 1906թ.
3) 1905թ.
4) 1908թ.

| 25 | **Ե՞րբ է Ֆրանսիան ճանաչել Ալժիրի անկախությունը.** |
|---|---|

1) 1969թ
2) 1972թ.
3) 1991թ. .
4) 1962թ

| 26 | **Ինչպե՞ս էր Ամենհոտեպ IV փարավոնի նոր անունը.** |
|---|---|

1) Թութմոս
2) Էխնաթոն
3) Ախետաթոն
4) Պեր-Ռամզես

| 27 | **Ո՞ր քաղաքում Պիպին Կարճահասակը հռչակվեց ֆրանկների թագավոր.** |
|---|---|

1) Ռեյմս
2) Փարիզ
3) Սուասոն
4) Կոմպիեն

| 28 | **Ո՞ր թագավորն է 1302թ. առաջին անգամ հրավիրել Գլխավոր շտատները.** |
|---|---|

1) Հենրիխ Բուրբոնը
2) Ֆիլիպ II Օգոստոսը
3) Սիմոն դը Մոնֆորը
4) Ֆիլիպ IV Գեղեցիկը

| 29 | **Բալկանյան ո՞ր երկրների միավորմամբ է ձևավորվել Ռումինիա պետությունը.** |
|---|---|

1) Վալախիայի և Մոլդովայի
2) Սերբիայի և Չեռնոգորիայի
3) Սերբիայի և Ալբանիայի
4) Հունաստանի և Մակեդոնիայի

| 30 | **Ո՞վ էր գլխավորում «Ազատ Ֆրանսիա» հակաֆաշիստական շարժումը.** |
|---|---|

1) Բլյումը
2) Դալադիեն
3) Պետենը
4) Շարլ դը Գոլը

**31** **Ո՞րն էր 325թ. Նիկեայի եկեղեցական ժողովի հրավիրման հիմնական պատճառը.**

1) Կանխելու քրիստոնեական եկեղեցու պառակտումն արևելյան և արևմտյան հատվածների:
2) Կանխելու Հռոմեական կայսրության փլուզումը:
3) Վերջ տալու դավանաբանական վեճերին և ամրապնդելու քրիստոնեական եկեղեցու միասնությունը:
4) Լուծելու և իրականացնելու քրիստոնեության տարածման խնդիրը Սասանյան Պարսկաստանում:

**32** **Ո՞րն է 732թ. Պուատիեի ճակատամարտի գլխավոր հետևանքը.**

1) Կասեցվեցին արաբների արշավանքներն Արևմտյան Եվրոպա:
2) Արաբները նվաճեցին ողջ Հարավային Գալլիան:
3) Ստեղծվեց հզոր Ֆրանկական տերությունը:
4) Արաբները դուրս մղվեցին Պիրենեյան թերակղզուց:

**33** **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Ասորեստանի արքա Սալմանասար I-ի թագավորության ավարտը
բ. Ցահմոս I-ի կողմից համաեգիպտական XVIII հարստության հիմնումը
գ. Բաբելոնիայի նվաճումը խեթական արքա Մուրսիլիս I-ի կողմից
դ. Եգիպտոսի Միջին թագավորության դարաշրջանի սկիզբը

1) դ, ա, բ, գ
2) դ, բ, գ, ա
3) ա, գ, դ, բ
4) բ, ա, գ, դ

**34** **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա.Նիկեայի նվաճումը թուրք-օսմանների կողմից
բ. Ռուսաստանում առաջին Երկրային ժողովի հրավիրումը
գ. Բաղդադի գրավումը թյուրք-սելջուկների կողմից
դ. Կոստանդնուպոլսի ազատագրումը խաչակիրներից

1) գ, դ, բ, ա
2) բ, գ, ա, դ
3) գ, դ, ա, բ
4) ա, դ, բ, գ

**35** **Ո՞վ է հետևյալ խոսքերի հեղինակը. «Ձեր ոչխարները խժռում են մարդկանց»:**

1) Կամպանելլան
2) Ֆրանսուա Ռաբլեն
3) Էրազմ Ռոտերդամցին
4) Թոմաս Մորը

**36** **Ո՞վ է հետևյալ խոսքերի հեղինակը. «Պետական գործիչը տարբերվում է քաղաքական գործչից նրանով, որ քաղաքական գործիչը կողմնորոշվում է դեպի հաջորդ ընտրությունները, իսկ պետական գործիչը՝ դեպի հաջորդ սերունդը»:**

1) Վ. Վիլսոնը
2) Ու. Չերչիլը
3) Վ. Պուտինը
4) Շ. Դը Գոլը

**37** **Պատմական գործիչներին համապատասխանեցնել նրանց կառավարման տարեթվերի հետ.**

| | |
|---|---|
| 1. Համմուրապի | ա. Ք.ա. 1468-1434թթ. |
| 2. Սարգոն | բ. Ք.ա. 1792-1750թթ. |
| 3. Թուկուլթի-Նինուրտա I | գ. Ք.ա. 2330-2295թթ. |
| 4. Թութմոս III | դ. Ք.ա. 1263-1234թթ. |
| 5. Ամենհոտեպ IV(Էխնաթոն) | ե. Ք.ա. 1352-1336թթ. |
| | զ. Ք.ա. 1540-1517թթ. |

1) 1-զ, 2-դ, 3-բ, 4-ե, 5-գ
2) 1-զ, 2-բ, 3-գ, 4-դ, 5-ա
3) 1-բ, 2-գ, 3-դ, 4-ա, 5-ե
4) 1-ե, 2-գ, 3-ա, 4-զ, 5-դ

**38** **Իրավական փաստաթղթերը համապատասխանեցնել դրանց ընդունման տարեթվերի հետ.**

| | |
|---|---|
| 1. «Անձի անձեռնմխելիության մասին օրենք» | ա. 1653թ. |
| 2. «Կառավարման միջոց» | բ. 1776թ. |
| 3. «Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիր» | գ. 1679թ. |
| | դ. 1789թ. |
| 4. «Իրավունքների օրենք» | ե. 1689թ. |
| 5. «Անկախության հռչակագիր» | զ. 1649թ. |

1) 1-ե, 2-զ, 3-ա, 4-բ, 5-գ
2) 1-զ, 2-ա, 3-դ, 4-ե, 5-բ
3) 1-դ, 2-ե, 3-բ, 4-զ, 5-գ
4) 1-բ, 2-գ, 3-զ, 4-դ, 5-ե

**39** **Ո՞վ էր Նոր կատակերգության հիմնադիրը.**

1) Տերենտիոսը
2) Սոֆոկլեսը
3) Արիստոֆանեսը
4) Մենանդրոսը

**40** **Ո՞վ է «Եռգրոշանոց օպերայի» բեմադրման հեղինակը.**

1) Է. Կիրխները
2) Բ. Բրեխտը
3) Ժ. Բրակը
4) Խ. Միրոն

**41** **Ո՞րն էր Ռուսաստանում ծավալված սլավոնասերների շարժման գլխավոր հետևանքը.**

1) Կտրուկ բարձրացավ ռուսների ազգային ինքնագիտակցությունը, խորացավ վերջինիս մեծապետական բնույթը:
2) Ռուսաստանում լայնորեն տարածվեցին սոցիալ-ժողովրդավարական գաղափարները:
3) Կասեցվեց Ռուսաստանի արդիականացման գործընթացը:
4) Երկրում հաստատվեց սահմանադրական միապետություն:

**42** **Ո՞րն է «Մյունխենյան գործարքի» գլխավոր հետևանքը.**

1) Եվրոպական պետություններին հաջողվեց ֆաշիստական Գերմանիայի ագրեսիան ուղղել ԽՍՀՄ-ի դեմ:
2) Չեխիան և Մորավիան վերածվեցին ֆրանսիական պրոտեկտորատի:
3) Սուդեթի մարզը Չեխոսլովակիայի առանձին շրջանների հետ անցավ Գերմանիային, Լեհաստանին և Հունգարիային:
4) Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան ապահովեցին անվտանգությունը Եվրոպայում:

**43** **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Փարավոն Թութմոս III-ի գահակալման ավարտը
բ. Մինայի կողմից Եգիպտոսի Վաղ թագավորության հիմնումը
գ. համաեգիպտական XI հարստության հիմնումը
դ. Եգիպտոսի Հին թագավորության դարաշրջանի սկիզբը

1) դ, ա, գ, բ
2) ա, գ, դ, բ
3) բ, դ, գ, ա
4) գ, ա, դ, բ

**44** **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Եգիպտացիների կողմից Անտիոքի գրավումը
բ. Ազատությունների մեծ հրովարտակի ստորագրումը Հովհան Անհողինի կողմից
գ. Գլխավոր շտատների հրավիրումը
դ. Խաչակիրների կողմից Կոստանդնուպոլսի գրավումը

1) դ, ա, գ, բ
2) գ, ա, բ, դ
3) գ, բ, ա, դ
4) դ, բ, ա, գ

| 45 | **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.** |
|---|---|

ա. Բոսնիայի և Հերցեգովինայի բռնակցումը Ավստրո-Հունգարիայի կողմից
բ. Անգլո-բուրական պատերազմը
գ. Բեռլինի վեհաժողովը
դ. Տրիպոլիտանիայի և Կիրենաիկայի զավթումը Իտալիայի կողմից

1) ա, գ, դ, բ
2) գ, բ, ա, դ
3) բ, դ, ա, գ
4) գ, բ, դ, ա

| 46 | **Կատարել համապատասխանեցում.** |
|---|---|

| | |
|---|---|
| 1. Տիբերիոս | ա. 161-180թթ. |
| 2. Մարկոս Ավրելիոս | բ. Ք.ա. 27թ.-Ք.հ. 14թ. |
| 3. Օկտավիանոս-Օգոստոս | գ. 14-37թթ. |
| 4. Կլավդիոս | դ. 98-117թթ. |
| 5. Տրայանոս | ե. 41-54թթ. |
| | զ. 69-79թթ. |

1) 1-ա, 2-զ, 3-ե, 4-դ, 5-բ
2) 1-բ, 2-դ, 3-զ, 4-գ, 5-ա
3) 1-ե, 2-բ, 3-դ, 4-զ, 5-գ
4) 1-գ, 2-ա, 3-բ, 4-ե, 5-դ

| 47 | **Կատարել համապատասխանեցում.** |
|---|---|

| | |
|---|---|
| 1. անգլիացիների վերահսկողության հաստատումը Եգիպտոսում | ա. 1867թ. |
| 2. Երրորդ հանրապետության սահմանադրության ընդունումը Ֆրանսիայում | բ. 1868թ. |
| 3. ընտրական երկրորդ բարեփոխման ընդունումը Մեծ Բրիտանիայում | գ. 1875թ. |
| 4. միջազգային օլիմպիական կոմիտեի ստեղծումը | դ. 1841թ. |
| 5. «Ազգերի իրավահավասարության» մասին օրենքի ընդունումը Հունգարիայի խորհրդարանի կողմից | ե. 1894թ. |
| | զ. 1863թ. |

1) 1-ե, 2-զ, 3-ա, 4-գ, 5-դ
2) 1-ա, 2-զ, 3-բ, 4-դ, 5-գ
3) 1-դ, 2-զ, 3-ա, 4-ե, 5-բ
4) 1-զ, 2-ե, 3-դ, 4-ա, 5-զ

48 **Կատարել համապատասխանեցում.**

1. Ռ. Օուեն
2. Ջ. Լիլբեռն
3. Է. Բյորկ
4. Օ. Կրոմվել

ա. հավասարական
բ. անկախական
գ. սոցիալիստ
դ. պահպանողական
ե. կոմունիստ

1) 1-գ, 2-ա, 3-դ, 4-բ
2) 1-ե, 2-բ, 3-գ, 4-ա
3) 1-դ, 2-ե, 3-ա, 4-գ
4) 1-ա, 2-գ, 3-դ, 4-ե

49 **Պայմանագրերը համապատասխանեցնել դրանց կնքման ժամանակի հետ.**

1. Ռուսաստանի միանալը Անտանտին
2. Լոզանի պայմանագիրը
3. Խորհրդա-իրանական պայմանագիրը
4. Եռյակ դաշինքի ձևավորման ավարտը

ա. 1882թ.
բ. 1904թ.
գ. 1922-1923թթ.
դ. 1921թ.
ե. 1907թ.

1) 1-դ, 2-բ, 3-գ, 4-ե
2) 1-գ, 2-ե, 3-բ, 4-դ
3) 1-ե, 2-գ, 3-դ, 4-ա
4) 1-բ, 2-դ, 3-ե, 4-գ

50 **Պատմական իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերի հետ.**

1. Պահպանողական ուժերի խռովությունը ԽՍՀՄ-ում
2. Կոսովոյի անկախության ճանաչումը ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի անդամ երկրների կողմից
3. Մարշալի պլանի գործադրումը ԱՄՆ-ի կողմից
4. Աբխազիայի անկախության հռչակումը

ա. 1990թ.
բ. 2008թ.
գ. 1991թ.
դ. 1948-1951թթ.
ե. 1998թ.

1) 1-ա, 2-բ, 3-գ, 4-դ
2) 1-գ, 2-բ, 3-դ, 4-ա
3) 1-բ, 2-դ, 3-ա, 4-ե
4) 1-գ, 2-բ, 3-ե, 4-դ

## Բ մակարդակ

**51** **Նշված պնդումներից ո՞րն է սխալ.**

1) Հռոմեական կայսրության կենտրոնը Բոսֆորի ափին գտնվող Բյուզանդիոն քաղաք է տեղափոխել Կոստանդիանոս կայսրը:
2) Երկրորդ Պունիկյան պատերազմի հետևանքով Կարթագենը դադարեց Հռոմի մրցակիցը լինելուց՝ դառնալով վերջինից կախյալ պետություն:
3) Մակեդոնական երկրորդ պատերազմի շնորհիվ Հունաստանը վերականգնեց իր լիակատար անկախությունը:
4) Կոռնելիոս Սուլլայի դիկտատուրան հանրապետական կարգի ճգնաժամի առաջին լուրջ դրսևորումն էր Հռոմում:

**52** **Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.**

1) Սրբազան հռոմեական կայսրության առաջին հիմնադիրն Օտտոն I-ն է:
2) Վերդենի 743 թ. դաշնագրով կայսերական տիտղոսն անցնելու էր Կարլոս Մեծի թոռ Լյուդովիկոս Գերմանացուն:
3) Պուատիեի մոտ 732 թ. արաբական առաջխաղացումը կասեցվեց մայորդոմ Պիպին Կարճահասակի կողմից:
4) Հենրիխ IV կայսեր պահանջով Հռոմի պապ Գրիգորիոս VII-ը ստիպված էր հրաժարական տալ:

**53** **Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.**

1) 1941թ. հուլիսի 22-ին Մեծ Բրիտանիան պատերազմում ԽՍՀՄ-ին աջակցելու մասին հայտարարություն արեց:
2) ԱՄՆ-ի նորընտիր նախագահ Ֆ. Ռուզվելտը 100 օրվա ընթացքում ընդունեց 50-ից ավելի օրենք:
3) 1921թ. շեյխ Մուհամմադ Խիաբանու գլխավորությամբ սկսվեց զինված ապստամբություն:
4) 1939թ. մայիսի 22-ին Գերմանիայի և Իտալիայի միջև ստորագրվեց նոր դաշինք:

**54** **Ի՞նչ է «ինվեստիտուրան».**

1) Վասալի պարտադիր ծառայությունը սենյորի համար
2) Սենյորի կողմից ավատի հանձնումը վասալին
3) Հավատարքնության դատարան
4) Կայսեր թագադրման արարողությունը

**55** **Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1. պերիոյկոսներ
2. նոմարքոսներ
3. օպտիմատներ
4. լոգոգրափոսներ

ա. Պատմական բնույթի առաջին երկերի հեղինակները Հին Հունաստանում:
բ. Հռոմի Ծերակույտի վերնախավի անդամներ:
գ. Սպարտական պետության սահմանամերձ շրջանների անձնապես ազատ բնակիչներ, որոնք, սակայն, զուրկ էին քաղաքացիական իրավունքներից:
դ. Փարավոնի կողմից տեղերում նշանակված պաշտոնյաներ Հին Եգիպտոսում:
ե. Հին Հռոմում քրմական դասի ներկայացուցիչներ:

1) 1-դ, 2-գ, 3-ե, 4-բ
2) 1-ե, 2-բ, 3-ա, 4-դ
3) 1-բ, 2-ա, 3-դ, 4-ե
4) 1-գ, 2-դ, 3-բ, 4-ա

**56** **Գտնել հասկացությունների համապատասխան բացատրությունները.**

1. «նոր ազգայնականություն»
2. Ռիսորջիմենտո
3. Ազգային կոնվենտ
4. չարտիզմ
5. արդյունաբերական հեղաշրջում

ա. Արդյունաբերական քաղաքակրթության երկրորդ փուլը, երբ արտադրությունը համատարած մեքենայացվում է:
բ. Արմատական զանգվածային շարժում Անգլիայում հանուն տղամարդկանց ընդհանուր ընտրական իրավունքի և հասարակության ազատականացման:
գ. ԱՄՆ-ի նախագահ Թեոդոր Ռուզվելտի բարեփոխումների նախագիծը:
դ. Իտալիայի ազգային միավորմանն ուղղված հզոր հեղափոխական շարժում:
ե. 1792թ. ընտրված Սահմանադիր ժողով Ֆրանսիայում:
զ. ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի բարեփոխումների ծրագիրը:

1) 1-գ, 2-դ, 3-ե, 4-բ, 5-ա
2) 1-զ, 2-բ, 3-դ, 4-ա, 5-գ
3) 1-ա, 2-զ, 3-ե, 4-դ, 5-բ
4) 1-դ, 2-գ, 3-զ, 4-ա, 5-ե

57 **Որո՞նք են Աշուր քաղաքի վերելքի հիմնական պատճառները.**

ա. Աշուրը գտնվում էր արևելքից արևմուտք և հյուսիսից հարավ տանող առևտրական ուղիների խաչմերուկում:
բ. Աշուրը ստեղծել էր մշտական արհեստավարժ բանակ:
գ. Աշուրն առևտրական գաղութներ էր ստեղծել հումքի աղբյուրներին առավել մոտ՝ հատկապես Փոքր Ասիայում:
դ. Աշուրի շրջակայքը հարուստ էր մետաղական հանքերով:
ե. Աշուրցի առևտրականներն արտահանում էին տեղի արհեստագործական արտադրանքը:

1) ա, գ, դ
2) ա, գ, ե
3) ա, բ, ե
4) բ, դ, ե

58 **Նշված փաստարկներից ընտրել 5-ը, որոնք հանդիսանում են Իվան IV Ահեղի գործունեության հետևանք.**

ա. Վերջնականապես տապալվեց Ոսկե Հորդայի տիրապետությունը:
բ. Հրավիրվեց ռուսական դասային ներկայացուցչական առաջին ժողովը:
գ. Ռուսական պետությանը միացվեցին Մերձբալթիկան, Լեհաստանը և Ուկրաինան:
դ. Ստեղծվեցին կառավարման համապետական մարմիններ՝ պրիկազներ:
ե. Մտցվեց զինվորական ծառայության նոր կարգ:
զ. Ռուսական պետությունը կորցրեց Մերձսևծովյան տարածքները:
է. Ռուսական եկեղեցին դուրս եկավ Կոստանդնուպոլսի պատրիարքի ենթակայությունից՝ դառնալով ինքնուրույն:
ը. Ռուսական պետությանը միացվեցին Կազանը, Աստրախանը և Արևմտյան Սիբիրը:

1) բ, գ, ե, զ, է
2) ա, դ, ե, զ, է
3) բ, գ, դ, զ, ը
4) բ, դ, ե, է, ը

59 **Բերված փաստարկներից ընտրել 4-ը, որոնք հանդիսանում են Ռուսաստանի Առաջին համաշխարհային պատերազմի մեջ մտնելու պատճառ.**

ա. Ավստրո-Հունգարիայից գրավել Ադրիատիկ ծովի հյուսիսային ափերը:
բ. Զավթել Բոսֆորի և Դարդանելի նեղուցները:
գ. Ջախջախել Գերմանիային և Ավստրո-Հունգարիային:
դ. Դուրս գալ Աֆրիկայի հյուսիսային ափեր:
ե. Մասնատել Օսմանյան տերությունը, զավթել Արևմտյան Հայաստանը, հասնել Միջերկրական ծով:
զ. Օսմանյան տերությունից գրավել Միջագետքը, Պաղեստինը, Արաբիան:
է. Նվաճել Ավստրո-Հունգարիայի կազմում գտնվող Գալիցիան:

1) ա, գ, զ, ե
2) ա, դ, ե, զ
3) բ, գ, ե, զ
4) բ, գ, դ, զ

60 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Թերմոպիլյան կիրճի ճակատամարտը
բ. Էտրուսկյան Վոլսինիում քաղաքի նվաճումը հռոմեացիների կողմից
գ. հույն-պարսկական պատերազմների ավարտը
դ. Նիկիասի հաշտությունը
ե. Մարաթոնի ճակատամարտը
զ. հունական նավատորմի հաղթանակը Միկալե հրվանդանի մոտ

1) բ, ա, ե, գ, զ, դ
2) զ, ե, ա, բ, գ, դ
3) ե, ա, զ, գ, դ, բ
4) գ, ա, զ, ե, դ, բ

61 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Մակեդոնական (Հայկական) արքայատան հիմնադրումը
բ. Օտտոն I-ի հաղթանակը հունգարների դեմ
գ. Քլոդվիգի մահը
դ. Վերդենի դաշնագիրը
ե. Կարլոս Մեծի գահակալման սկիզբը

1) գ, ե, դ, ա, բ
2) բ, ա, ե, գ, դ
3) դ, բ, ե, ա, գ
4) գ, ա, ե, դ, բ

62 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Իտալական թագավորության հռչակումը
բ. բաբիների շարժման ճնշումն Իրանում
գ. Հունաստանի անկախության ճանաչումը տերությունների կողմից
դ. միապետության տապալումը Ֆրանսիայում
ե. դեկաբրիստների ապստամբությունը Ռուսաստանում
զ. Ջորջ Վաշինգտոնի առաջին անգամ ԱՄՆ-ի նախագահ ընտրվելը
է. հունգարական հեղափոխությունը
ը. ֆրանս-պրուսական պատերազմը
թ. «Փառահեղ հեղափոխությունը» Անգլիայում
ժ. հակաթուրքական ապստամբությունը Բուլղարիայում

1) գ, դ, ա, ժ, ը, զ, է, բ, ե, թ
2) թ, զ, դ, ե, գ, է, բ, ա, ը, ժ
3) թ, զ, դ, գ, ե, բ, է, ժ, ը, ա
4) ա, ժ, բ, ե, դ, զ, գ, թ, է, ը

63 **Պատմական ո՞ր ժամանակաշրջանին էր հատուկ հետևյալ ասույթը. «Չկա ուրիշ իշխանություն, բացի Աստծո տվածից»:**

1) Ռեֆորմացիայի ժամանակաշրջանին
2) «Պերիկլեսյան ոսկեդարի» ժամանակաշրջանին
3) Բարբարոսական թագավորության ժամանակաշրջանին
4) Հռոմեական հանրապետության ժամանակաշրջանին

64 **Ո՞վ է հետևյալ խոսքերի հեղինակը. «Կանգնեցնել Անգլիայի սողքը դեպի սոցիալիզմ»:**

1) Մ. Թետչերը
2) Ու. Չերչիլը
3) Թ. Բլեյրը
4) Ջ. Մեյջորը

65 **Կատարել համապատասխանեցում.**

1. հանրապետական կարգի հաստատումը Հռոմում
2. Սպարտայի արքա Արքիդամոսի բանակի ներխուժումը Ատտիկա
3. Պլատեայի ճակատամարտը հունական և պարսկական բանակների միջև
4. Մակեդոնիայի արքա Պերսևսին պատերազմի հայտարարումը Հռոմի կողմից

ա. Ք.ա. 431թ.
բ. Ք.ա. 171թ.
գ. Ք.ա. 510թ.
դ. Ք.ա. 479թ.
ե. Ք.ա. 280թ.

1) 1-ե, 2-դ, 3-գ, 4-ա
2) 1-գ, 2-ա, 3-դ, 4-բ
3) 1-ա, 2-գ, 3-դ, 4-բ
4) 1-դ, 2-բ, 3-ե, 4-գ

66 **Ստեղծագործությունը համապատասխանեցնել հեղինակի հետ.**

1. «Օթելլո»
2. «Սիքստինյան Տիրամայրը»
3. «Տիրակալը»
4. «Խորհրդավոր ընթրիք»

ա. Մաքիավելի
բ. Լեոնարդո դա Վինչի
գ. Ուիլյամ Շեքսպիր
դ. Ռաֆայել Սանտի
ե. Ռուբենս

1) 1-գ, 2-դ, 3-բ, 4-ե
2) 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ
3) 1-ե, 2-ա, 3-գ, 4-դ
4) 1-ա, 2-ե, 3-բ, 4-գ

67 **Նշված փաստարկներից ընտրել 4-ը, որոնք վերաբերում են Ասորեստանի Թիգլաթպալասար III-ի գահակալման ժամանակաշրջանին.**

ա. Բաբելացիների անկախության համար մղվող երկարատև պայքարը հարկադրեց Թիգլաթպալասարին անկախություն շնորհել Բաբելոնին:
բ. Ասորեստանի արքան ստեղծեց մշտական արհեստավարժ բանակ:
գ. Արևմուտքում ասորեստանյան արքան եգիպտացիներին զիջեց Կարքեմիշ քաղաքը Եփրատի ափին:
դ. Ասորեստանյան բանակը նվաճեց Եգիպտոսը, իսկ Թիգլաթպալասար III-ը հռչակվեց փարավոն:
ե. Ծանր պարտության մատնելով ուրարտացիներին՝ Թիգլաթպալասար III-ը նվաճեց Ուրարտուի գերիշխանության տակ գտնվող մի շարք երկրներ:
զ. Արևմուտքում ասորեստանցիները նվաճեցին փյունիկյան ծովափն ու Պաղեստինը՝ հասնելով Եգիպտոսի սահմաններին:
է. Երկարատև պատերազմից հետո Թիգլաթպալասար III-ն Ուրարտական տերությանը զիջեց իր թագավորության հյուսիսային որոշ մարզեր:
ը. Հարավում Թիգլաթպալասար III-ը նվաճեց Բաբելոնը և հռչակվեց բաբելոնյան արքա:

1) գ, դ, է, ը
2) ա, դ, զ, է
3) բ, գ, ե, ը
4) բ, ե, զ, ը

68 **Նշված փաստարկներից ընտրել 4-ը, որոնք բնորոշ էին Իրանում տարածված բաբիականության շարժմանը.**

ա. Բոլոր մուսուլմանների հոգևոր առաջնորդ էր հռչակվում Իրանի շահնշահը:
բ. Իրանում պետք է ստեղծվեր Բաբիների սրբազան թագավորություն, ուր կհաստատվեին սոցիալական արդարություն և հավասարություն:
գ. Ղուրանը հնացել է և պետք է փոխարինվի նոր գրքով՝ «Բայանով» («Հայտնություն»):
դ. Հռչակվում էր «սրբազան» պատերազմ բոլոր այլադավանների դեմ, մերժվում էր այլախոհությունը:
ե. Պետք է հաստատվեր կնոջ և տղամարդու իրավահավասարություն:
զ. Խրախուսվում էին բազմակնությունը և հարեմների ընդլայնումը:
է. Մերժվում էր «անհավատների» դեմ մուսուլմանների սրբազան պատերազմը, խրախուսվում հանդուրժողականությունն այլախոհության նկատմամբ:

1) բ, գ, ե, է
2) ա, գ, դ, զ
3) բ, դ, ե, զ
4) բ, դ, զ, է

**69** **Բերված փաստարկներից ընտրել 3-ը, որոնք տեղ են գտել Թ. Բլեյրի «Երրորդ ուղի: Նոր քաղաքականություն նոր դարաշրջանի համար» գրքում.**

ա. թետչերիզմի ծայրահեղական կողմերի մերժում
բ. միջազգային հարաբերություններում հավասարակշռության ստեղծում
գ. արտադրության և իրացման միասնական կառավարման համակարգի ստեղծում
դ. սոցիալիզմի ոգով տնտեսությունը պետականացնելու լեյբորիստների նախկին մոտեցման մերժում
ե. նոր՝ խառը տնտեսության ստեղծում
զ. տնտեսության «սոցիալականացում»
է. օտարերկրյա կապիտալի գործունեության սահմանափակում

1) ա, դ, է
2) գ, դ, զ
3) բ, գ, ե
4) ա, դ, ե

**70** **Տալ նշված տերմինների բացատրությունը.**

1. արքոնտ
2. գերուսիա
3. ցենզոր
4. մագիստրատուրա
5. հելոտ
6. դոմինատ

ա. 5 տարին մեկ ընտրվող և բնակչության հաշվառումն իրականացնող պաշտոնյա Հին Հռոմում
բ. ստրկացված բնակչության ներկայացուցիչ Հին Սպարտայում
գ. կայսր Դիոկղետիանոսի կողմից հիմնված կառավարման ձև
դ. նախապես՝ ցմահ կառավարող գլխավոր գործադիր պաշտոնյա Հին Աթենքում
ե. գործադիր իշխանության ճյուղավորված համակարգ Հին Հռոմում
զ. 30 հոգուց կազմված ավագների խորհուրդ Հին Սպարտայում
է. գերագույն մագիստրատի տեղակալ Հին Հռոմում

1) 1-է, 2-դ, 3-բ, 4-ե, 5-գ, 6-ա
2) 1-զ, 2-ե, 3-դ, 4-գ, 5-ա, 6-բ
3) 1-դ, 2-զ, 3-ա, 4-ե, 5-բ, 6-գ
4) 1-դ, 2-զ, 3-ե, 4-ա, 5-գ, 6-է

71 **Տրված հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1. հուգենոտներ
2. լյութերական եկեղեցի
3. Ազգային կոնվենտ
4. արևմտականներ
5. Կառավարման միջոց
6. Գերմանական միություն

ա. ֆրանսիական Սահմանադիր ժողով
բ. Վիեննայի վեհաժողովի որոշմամբ ստեղծված պետական կազմավորում
գ. բողոքական եկեղեցու անվանումը Գերմանիայում
դ. կալվինական եկեղեցու հետևորդներ Ֆրանսիայում
ե. Պետրոս Մեծի կողմից նախանշված Ռուսաստանի զարգացման ուղու կողմնակիցներ
զ. անգլիական սահմանադրությունը Օ. Կրոմվելի պրոտեկտորատի ժամանակ
է. Անգլիայի համար նախանշված զարգացման ուղու կողմնակիցներ XIX դարում

1) 1-դ, 2-գ, 3-ա, 4-ե, 5-զ, 6-բ
2) 1-ե, 2-է, 3-բ, 4-դ, 5-ա, 6-գ
3) 1-ե, 2-բ, 3-զ, 4-գ, 5-է, 6-դ
4) 1-դ, 2-գ, 3-ա, 4-է, 5-բ, 6-զ

72 **Տրված հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1. «Հակակոմինտերնյան պակտ»
2. «Բեռլին –Հռոմ առանցք»
3. Կոմունիստական Ինտերնացիոնալ
4. Հակահիտլերյան կոալիցիա
5. «Հռենոսի ապառազմականացված գոտի

ա. տարբեր երկրների կոմունիստական կուսակցությունների միջազգային կազմակերպություն
բ. Գերմանիայի և Ճապոնիայի միջև 1936թ. նոյեմբերի 25-ին Բեռլինում կնքված պայմանագիր
գ. Երկրորդ աշխարհամարտի տարիներին Գերմանիայի և նրա դաշնակիցների դեմ պայքարող պետությունների ու ժողովուրդների միություն
դ. Վերսալյան պայմանագրով որոշված գոտի Գերմանիայի տարածքում
ե. Երկրորդ աշխարհամարտի տարիներին ծավալված ազգային-ազատագրական, հակաֆաշիստական շարժում
զ. 1936թ. ձևավորված գերմանա-իտալական խմբավորում

1) 1-ա, 2-բ, 3-գ, 4-ե, 5-դ
2) 1-բ, 2-զ, 3-ա, 4-գ, 5-դ
3) 1-զ, 2-բ, 3-ե, 4-դ, 5-գ
4) 1-զ, 2-դ, 3-ա, 4-ե, 5-բ

**73** **Նշվածներից որո՞նք են խաչակրաց արշավանքների հետևանքները.**

ա. Աճեցին Արևելքի և Արևմուտքի միջև կատարվող ապրանքափոխանակության ծավալները, ինչն էլ նպաստեց արհեստագործության զարգացմանը Եվրոպայում:
բ. Արևելքի երկրներում լայնորեն տարածվեցին Վաղ Վերածննդի գաղափարները:
գ. Եվրոպայում տարածվեցին մինչ այդ անծանոթ բազմաթիվ մշակաբույսեր:
դ. Եվրոպական երկրներում լայն տարածում գտան իսլամն ու մահմեդական մշակույթը:
ե. Միջերկրածովյան առևտրում բարձրացավ Վենետիկի և Ջենովայի դերակատարությունը:
զ. Խորացան Արևելք-Արևմուտք և բյուզանդական ու հռոմեակաթոլիկական եկեղեցիների միջև առկա հակասությունները:

1) ա, գ, ե, զ
2) բ, գ, դ, ե
3) ա, գ, դ, ե
4) բ, դ, ե, զ

**74** **Բերված փաստարկներից ընտրել 3-ը, որոնք հանդիսանում են Բրեստ-Լիտովսկի պայմանագրի հետևանք.**

ա. Խորհրդային Ռուսաստանը հրաժարվում էր Լեհաստանից, Ֆինլանդիայից, Բելառուսիայի մի մասից, Ուկրաինայից և մերձբալթյան երկրներից:
բ. Գերմանիան ընդունում էր իր պարտությունը և զորքերը դուրս բերում ռուսական ռազմակալված տարածքներից:
գ. Ռուսաստանը պարտավորվում էր վճարել 6 միլիոն ոսկի մարկ ռազմատուգանք:
դ. Գերմանիան պարտավորվում էր փոխհատուցել հաղթող երկրների նյութական վնասները:
ե. Օսմանյան Թուրքիային էին տրվում ո՛չ միայն Արևմտյան Հայաստանը, այլև Կարսն ու Արդահանը:
զ. Բրեստ-Լիտովսկի պայմանագրով Արևմտյան Հայաստանում ստեղծվում էր ժամանակավոր վարչություն:
է. Օսմանյան Թուրքիան պարտավորվում էր դադարեցնել գաղտնի բանակցությունները Մեծ Բրիտանիայի հետ:

1) ա, գ, է
2) բ, ե, զ
3) գ, դ, է
4) ա, գ, ե

**75** **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Նիկիասի հաշտությունը Սպարտայի և Աթենքի միջև
բ. Դարեհ I-ի անհաջող արշավանքը Հունաստան
գ. Պարսկական նավատորմի ջախջախումը Սալամին կղզու մոտ
դ. Իսոսի ճակատամարտը մակեդոնական և պարսկական բանակների միջև
ե. Կորնթոսի համահունական վեհաժողովը
զ. Անտիգոնոսի պարտությունը Սելևկոսից և դաշնակիցներից
է. Թրակիայում ծագած ապստամբության ճնշումը հռոմեացիների կողմից
ը. Պունիկյան պատերազմների սկիզբը
թ. Արբելայի ճակատամարտը մակեդոնական և պարսկական զորքերի միջև
ժ. Հռոմեական բանակի վճռական հաղթանակը Մակեդոնիայի արքա Պերսևսի նկատմամբ

1) բ, գ, է, ա, ժ, ը, ե, դ, թ, զ
2) գ, բ, ե, դ, զ, ժ, ը, թ, է, ա
3) դ, ա, գ, է, ժ, ը, թ, բ, զ, ե
4) բ, գ, ա, ե, դ, թ, զ, ը, ժ, է

**76** **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Եվրոպական դրոշը Եվրոպայի խորհրդի կողմից որպես խորհրդանիշ ընդունվելը
բ. «Զազային երգիչը» ժապավենի ցուցադրումը
գ. «Բրեժնևյան հայեցակարգի» ընդունումն Արևելյան Եվրոպայի երկրներում
դ. Շենգենյան համաձայնագրի ուժի մեջ մտնելը
ե. Ժ. Պ. Սարտրին Նոբելյան մրցանակի շնորհումը
զ. գերմանական զորքերի ներխուժումը Ավստրիա

1) գ, բ, զ, ա, ե, դ
2) բ, զ, ա, ե, գ, դ
3) զ, բ, ա, ե, դ, գ
4) բ, զ, գ, դ, ե, ա

**77** **Կատարել համապատասխանեցում.**

1. զրադաշտականություն
2. բրահմայականություն
3. հուդայականություն
4. կոնֆուցիականություն
5. քրիստոնեություն

ա. Չինաստան
բ. Իսրայել
գ. Պաղեստին
դ. Հնդկաստան
ե. Իրան
զ. Ասորեստան

1) 1-ե, 2-դ, 3-բ, 4-ա, 5-գ
2) 1-ե, 2-դ, 3-բ, 4-զ, 5-ա
3) 1-զ, 2-ե, 3-գ, 4-ա, 5-դ
4) 1-դ, 2-ա, 3-ե, 4-զ, 5-բ

78 **Կատարել համապատասխանեցում.**

| # | Իրադարձությունը | # | Տարեթիվը | # | Վայրը | # | Գործիչը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Լյութերին գաղափարներից հրաժարեցնելու համար հրավիրված Ռայխստագը | 1. | 1242 թ. | 1. | Նանտ | 1. | Ալեքսանդր Նևսկի |
| 2. | հուգենոտներին դավանանքի ազատություն շնորհող էդիկտը | 2. | 1055 թ. | 2. | Բաղդադ | 2. | Կարլոս V |
| 3. | ճակատամարտը Նովգորոդի և գերմանացի խաչակիրների զորքերի միջև | 3. | 1521 թ. | 3. | Վորմս | 3. | Հենրիխ IV Բուրբոն |
| 4. | թուրք-սելջուկների տերության առաջացումը | 4. | 1598 թ. | 4. | Չուդ լիճ | 4. | Տուղրիլ բեկ |

1)

| | | | |
|---|---|---|---|
| 1 | 1 | 4 | 2 |
| 2 | 3 | 1 | 3 |
| 3 | 4 | 2 | 1 |
| 4 | 2 | 3 | 4 |

2)

| | | | |
|---|---|---|---|
| 1 | 4 | 2 | 3 |
| 2 | 3 | 4 | 4 |
| 3 | 1 | 3 | 2 |
| 4 | 2 | 1 | 1 |

3)

| | | | |
|---|---|---|---|
| 1 | 2 | 4 | 1 |
| 2 | 4 | 3 | 2 |
| 3 | 1 | 2 | 4 |
| 4 | 3 | 1 | 3 |

4)

| | | | |
|---|---|---|---|
| 1 | 3 | 3 | 2 |
| 2 | 4 | 1 | 3 |
| 3 | 1 | 4 | 1 |
| 4 | 2 | 2 | 4 |

79 **Կատարել համապատասխանեցում.**

| # | Իրադարձությունը | # | Տարեթիվը | # | Վայրը |
|---|---|---|---|---|---|
| 1. | Խաղաղության համաշխարհային համաժողովի գումարումը | 1. | 1891թ. | 1. | Բեռն |
| 2. | Գերմանական կայսրության հռչակումը | 2. | 1889թ. | 2. | Լոնդոն |
| 3. | Ռուսաստանի նախաձեռնությամբ պետությունների միջազգային համաժողովի հրավիրումը | 3. | 1843թ. | 3. | Վերսալ |
| 4. | Խաղաղության միջազգային բյուրոյի ստեղծումը | 4. | 1871թ. | 4. | Հաագա |

1)

| | | |
|---|---|---|
| 1 | 3 | 2 |
| 2 | 4 | 3 |
| 3 | 2 | 4 |
| 4 | 1 | 1 |

2)

| | | |
|---|---|---|
| 1 | 2 | 4 |
| 2 | 1 | 3 |
| 1 | 4 | 1 |
| 4 | 3 | 2 |

3)

| | | |
|---|---|---|
| 1 | 4 | 1 |
| 2 | 3 | 4 |
| 3 | 2 | 2 |
| 4 | 1 | 3 |

4)

| | | |
|---|---|---|
| 1 | 3 | 2 |
| 2 | 1 | 4 |
| 3 | 2 | 1 |
| 4 | 4 | 3 |

80 **Պատմական իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերի հետ.**

| | |
|---|---|
| 1. Կարիբյան ճգնաժամը | ա. 1946թ. |
| 2. ԳԴՀ-ի ստեղծումը | բ. 1989թ. |
| 3. Բեռլինի պատի փլուզումը | գ. 1962թ. |
| 4. «Սառը պատերազմի» սկիզբը | դ. 1949թ. |
| 5. Հակահիտլերյան խմբավորման ձևավորումը | ե. 1961թ. |
| | զ. 1942թ. |

1) 1-դ, 2-ե, 3-ա, 4-բ, 5-գ
2) 1-գ, 2-դ, 3-բ, 4-ա, 5-զ
3) 1-ե, 2-ա, 3-զ, 4-դ, 5-բ
4) 1-ա, 2-գ, 3-դ, 4-զ, 5-ե